ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«05» 03 2025թ. N 20/169

Օր. N 1

«Գոռա» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ռ. Շեկոյանին,
ՀՎՀՀ 01314806
Ք. Երևան, Իսակովի փ. 40շ. 36բն.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գոռա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև ՀՀ ԱԱԾ կարիքների համար կոշիկի փայլեցման քսուքի ձեռքբերման համար 2024 թվականի փետրվարի 6-ին կնքված թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-ՄՆԱԿՔ-1 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և 2024 թվականի փետրվարի 12-ին կնքված թիվ N 11/265-2024 ծածկագրով համաձայնագրի, «Գոռա» ՍՊԸ-ն՝ ըստ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պարտավոր էր մատակարարել 980 000 (ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) գումարի ապրանք (մատակարարման վերջնաժամկետ՝ 2024 թվականի հունիսի 30-ը):

Հաշվի առնելով «Գոռա» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամկետում ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ ԱԱԾ-ն 03.03.2025թ-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է 2024 թվականի փետրվարի 6-ին կնքված թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-ՄՆԱԿՔ-1 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Գոռա» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին, Պայմանագրի 6.2 կետի համաձայն

փոխանցել 83 300 (ութսուներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ՝ մատակարարման ժամկետների խախտման տույժ, և Պայմանագրի 6.3 կետի համաձայն փոխանցել 4900 (չորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ որպես տուգանք: Բացի այդ հրավերի 10.6 կետի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա են գանձման համապատասխանաբար 98 000 (իննսունութ հազար) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և 147 000 (մեկ հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից վերը նշված վճարման ենթակա՝ պայմանագրի և որակավորման ապահովումների գումարների վճարման դեպքում ՀՀ ԱԱԾ կողմից չի կայացվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում՝ լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ազգային անվանգության ծառայության տնտեսական վարչություն:

Ա. Հակոբյան